ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հուլիսի 7-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը։

Ժողովը բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

Ներածական խոսքում նա նշեց, որ ժողովում կքննարկվի երկու կարևոր պրոբլեմ՝ Զանգեզուրի, որպես Սովետական Միության պղնձա-մոլիբդենային խոշոր բազայի պրոբլեմը և Արարատյան դաշտավայրի ճահճացած ու աղակալած հողերի օգտագործման պրոբլեմը։ Այդ պրոբլեմները ունեն ժողովրդա-տնտեսական մեծ նշանակություն։ Ընկ. Վ. Համբարձումյանը ասաց, որ վերջին տարիներում Հայաստանի երկրաբանները հայտաբերել են Հարավային Հայաստանում պղնձի և մոլիբդենի նոր հանքավայրեր։ Այդ հետազոտությունները վկայում են, որ ռեսպուբլիկայի ընդերքը դեռ բավականաչափ չի ուսումնասիրված և այս բնագավառում գիտնականների առաջ ծառացած են մեծ խնդիրներ։

«Հարավային Հայաստանը որպես Սովետական Միության պղնձա-մոլիբդենային խոշորագույն հանքավայր» մանրամասն զեկուցումով հանդես եկավ երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Ի. Մաղաքյանը։

Երկրորդ զեկուցումը՝ «Հայաստանի հարավային շրջանների կունավոր մետալուրգիայի դերը երկրի արտադրողական ուժերի զարգացման ասպարեզում» կատարեց ավագ գիտական աշխատող Գ. Ալավերդյանը։

Ժողովը հանձնարարեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահությանը՝ կազմակերպել ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի ուսումնասիրման խորհուրդ։

Այսօր տեղի կունենա Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի երկրորդ նիստը։